

«ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ

**ՊԱՇՏՈՆԸ
ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ՎԱՅՐԸ**

«Կապան» մասնաճյուղի ոսկերիչ
Լրիվ աշխատաժամանակ
անորոշ ժամկետով
ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ Ընկերության «Կապան» մասնաճյուղի ոսկերիչ պաշտոնը համալրելու նպատակով: Աշխատողի հիմնական գործառույթները ներառում են Ընկերությունում գրավադրված ոսկու պարկերի, գրավի առարկաների առկայության և գնահատման ճշտության ստուգումների իրականացում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Գրավի առարկա ոսկյա իրերի պատշաճ ձևով ստուգում, գնահատում և հետհանձնում՝ համաձայն Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջների,
- Գնահատման արդյունքների մասին տեղեկատվության տրամադրում վարկային մասնագետին,
- Ոսկյա իրերի գրավը պարունակող պարկերի հանձնում դրամարկղ և դրամարկղից դրանց հետընդունում՝ համաձայն Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջների,
- Ոսկու և թանկարժեք զարդերի շուկայում էական փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում անմիջական ղեկավարին,
- Հաշվետվությունների կազմում և ներկայացում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- միջնակարգ, միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն (բարձրագույն կրթությունը կամ ոսկերչության մասնագիտացմամբ միջին մասնագիտական կրթությունը նախընտրելի է),
- Վերջին 5 տարվա ընթացքում առնվազն 6 ամսվա աշխատանքային փորձ որպես ոսկերիչ-գնահատող (նախընտրելի է ֆինանսաբանկային ոլորտում),
- Ոսկու հարգերի, թանկարժեք քարերի և զարդերի գնահատման մեթոդների և ճանաչելիության չափանիշների իմացություն,
- Ազնվություն և անաչառություն,
- Բժախնդրություն,
- Հայերենի գերազանց իմացություն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Համապատասխան որակավորում ունեցող անձանց խնդրում ենք իրենց ինքնակենսագրությունը (CV) հայերեն լեզվով ներկայացնել ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան 3304, Ա. Մանուկյան 1/51 կամ ուղարկել էլեկտրոնային փոստով՝ anahit.manukyan@kamurj.am՝ հստակ նշելով պաշտոնը, որին հավակնում են:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԿԻԶԲԸ՝
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝

06 փետրվարի 2018
20 փետրվարի 2018